ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

2467/92[1]
ԱՒԵՏԱՐԱՆ

Ալշխան (Կիլիկիա) ՌՃԾԹ=1711

Նորայր Արք. Պողարեան 1966-էն 1991 թուականներու ընթացքին «Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» տասնմէկ հատորներու մէջ ամփոփած է Պատրիարքութեանս Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան մէջ պահուող շուրջ չորս հազար ձեռագիր մատեանները՝ մանրամասն նկարագրութիւններով։ Սակայն «Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց»-ի Ը. Հատորին մէջ ամփոփուած թիւ 2559/4-էն 2669/114 գրչագիր մատեաններու նկարագրութիւնները Երախտաշատ Սրբազանն ինք չէ ըրած, այլ առած է Մեսրոպ Վրդ. Նշանեանի՝ 1907 թուականին կատարած յոյժ հակիրճ նկարագրութեան ձեռագիր տետրակէն։ Յիշեալ թուակիր մատեանները կը պահուին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Գանձատան մէջ։ Եւ չնայած Մեսրոպ Վրդ. Նշանեանի կատարած նկարագրութեան կարեւորութեանը, անոնք շատ հակիրճ են եւ կարօտ են մանրամասն նկարագրութեան։

Բնաւ չստուերելով Մեսրոպ Վրդ. Նշանեանի կատարած հակիրճ նկարագրական աշխատանքը՝ անհրաժեշտ կը նկատենք առաւել մանրամասն նկարագրութիւններով «Սիոն»-ի մէջ պարբերաբար ներկայացնել Գանձատան մէջ պահուող մատեաններու եւ Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան մէջ պահուող տակաւին չնկարագրուած եւ նոր ձեռք բերուած գրչագիր մատեաններու եւ արխիւային նիւթերու նկարագրութիւնները։

Ստորեւ նկարագրած ենք մոմագնի համար 1867 թուականին Եսայի Պատրիարքին կողմէ շնորհուած օրհնութեան կոնդակը եւ 2467/92 թուակիր գրչագիր Աւետարանը։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մեծութիւն՝ 9x6x4, 297՝ թերթք, դատարկ 1. 2. 3ա. 4բ. 5ա. 6բ. 7ա. 8բ. 9ա. 10բ. 11ա. 12բ. 13ա. 14բ. 15. 16ա. 17բ. 18ա. 19բ. 20ա. 21բ. 22ա. 24բ. 26բ. 27ա. 150ա. 228. 289ա։ Պրակք՝ Ա.10 Բ.2 Դ.10 ԺԸ10[2]։ Հանգամանք՝ լաւ, միայն որոշ պրակներ թուլցած եւ պրակաթելերը փրթած են։ Մագաղաթ՝ կոկեալ, գրութիւն՝ վարժ բոլորգիր, երկսիւն, 23 տող, սեւ թանաքով, գլխագրերը՝ ոսկետառ եւ կապոյտ ներկով, զարդագրեր՝ թռչնագիր, հանգուցագիր եւ կենդանագիր լուսանցազարդ հատուածներու սկիզբը։ Գրիչ՝ Մահտեսի Ղաբլան ատանացի, հայրն իւր Սարգիս գրագիր եւ Գրիգոր։ Ծաղկող՝ Մահտեսի Ղաբլան ատանացի եւ Սարգիս գրագիր։ Մանրանկարիչ՝ Ստեփանոս Վրդ. Կաֆայեցի։ Լուսանցազարդք՝ առատ, բուսական եւ կենդանական

[1] Առաջին թիւը Ս. Յակոբեանց Ձեռագրատան գրչագիր մատեաններու հերթական թուահամարն է, իսկ երկրորդը՝ Գանձատան գրչագիր մատեաններու հերթական թուահամարը։ Սոյն գրչագիրը ի պահ դրուած է Ս. Յակոբեանց Գանձատան մէջ։

[2] Քանի որ ձեռագիր մատեանի գրութեան եւ մանրանկարներու ստեղծման ժամանակի միջեւ բաւական տարբերութիւն կայ, մեր կարծիքով, հաւանականաբար քանի մը պրակներ աւելցուած են մանրանկարներու ստեղծման ժամանակ։

յօրինուածքներով։ Մանրանկարք մեծ վարպետութեամբ եւ ինքնատիպ ոճով։ Տէրունական պատկերները զետեղուած են ձեռագրի սկիզբը, իսկ աւետարանիչներու պատկերները իւր սարօքն՝ ըստ կարգի՝ իւրաքանչիւրը համապատասխան աւետարանին սկիզբը, իսկ Գրիգոր Շղթայակրի եւ Յովհաննէս Կոլոտ պատրիարքներու դիմանկարները ձեռագրին վերջը։ Խորանք՝ էջ 16բ. 17ա. 18բ. 19ա. 20բ. 21ա. 22բ. 23ա. 23բ. 24ա. 28ա. 101ա. 151ա. 229ա։ Պահպանակ՝ մագաղաթ դատարկ, 2-էջ առջեւից, 2-էջ վերջից։

Կազմը՝ տախտակ, աստառը՝ արծաթաթել հիւսուածք, կրկնակազմը զարդարուած հիւսկէն (ֆիլիգրի) արուեստով նրբաճաշակ բուսական յօրինուածքներով եւ էմալէ (մինայ) գոյնզգոյն զարդարանքներով, Ա. փեղկի կեդրոնը խաչեալ Քրիստոսի բարձրաքանդակը, Բ. փեղկի կեդրոնը Ս. Կոյսը։ Ձեռագրի երեք կողմերը զարդարուած է գոյնզգոյն զարդանկարներով։ Ստացող՝ Գրիգոր՝ Պատրիարք Երուսաղիմայ։

1. էջ 3բ. Աւետում
2. էջ 4ա. Մոգերու երկրպագութիւն
3. էջ 5բ. Ընծայումն ի տաճարի
4. էջ 6ա. Մկրտութիւն
5. էջ 7բ. Պայծառակերպութիւն
6. էջ 8ա. Մատնութիւն Տեառն
7. էջ 9բ. Խաչելութիւն
8. էջ 10ա. Յարութիւն
9. էջ 11բ. Համբարձում
10. էջ 12ա. Հոգեգալուստ
11. էջ 13բ. Վերջին Դատաստան
12. էջ 14ա. Տեսիլք Եզեկիէլ Մարգ.
13. էջ 27բ. Մատթէոս Աւետարանիչ
14. էջ 100բ. Մարկոս Աւետարանիչ
15. էջ 150բ. Ղուկաս Աւետարանիչ
16. էջ 228բ. Յոհաննէս Աւետարանիչ
17. էջ 289բ. Տր. Գրիգոր Պատրիարք Սբյ. Եմի.
18. էջ 290ա. Տր. Յովհաննէս Պատրիարք Բուզանդիոյ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

1-2 դատարկ.

3բ.-14ա. մանրանկարք.

15-դատարկ

16-17 թուղթ Եւսեբիոսի՝ նկարազարդ խորանով.

18-24 համաբարբառի. տախտակներ՝ նկարազարդ խորանօք.

25ա.-26բ. սկիզբն գլխոց Մատթէոսի աւետարանի.

-Վասն մոգուցն, Վասն կոտորածի մանկանցն, վասն յառաջընթաց քարոզութեան Յովհաննու...։

26բ. համաձայնութիւն նախասացեալ գլխոցս.

-Ի հինգ տեղւոջն՝ չորս աւետարանիչ[3]ն համաձայնին...։

26բ-27ա Նախադրութիւն Մատթէոսի աւետարանին.

Աւետարանս որ ըստ Մատթէոսի՝ գրեալ է զինքն Մատթէոս աշակերտ Տեառն...։

29 խորանազարդ տիտղոսաթերթ Մատթէոսի աւետարանի.

-Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ դաւթի...։

97բ. Մատթէոսի աւետարանի վերջաւորութեան՝ յիշատակարան գրչի.

-Ով սրբազան հայրք և եղբայրք իմ, մեղաւոր և անարժան զՍարգիս գրիչս յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր. մեղաց թողութիւն խնդրելով և Տէրն մեր Քրիստոս զձերն թողցէ ամէն. Հայր մեր։

98ա.-99 սկիզբն գլխոց աւետարանին որ ըստ Մարկոսի.

-Վասն դիւահարին, վասն Պետրոսի զոգնչին, վասն բժշկութեան պեսպէս հիւանդութեան...։

99.-նախադրութիւն Մարկոսի աւետարանին.

-Աւետարան որ ըստ Մարկոսի գրեալ է...։

[3] SIC <այս նշանով կը վկայենք, որ հաւատարիմ ենք մնացած բնագրին>

101. խորանազարդ տիտղոսաթերթ Մարկոսի աւետարանի.

-Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ. որպէս եւ գրեալ է յեսայի մարգարէ ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ...

146բ-Մարկոսի աւետարանի վերջաւորութեան յիշատակարան գրչի.

-Ով հայրք և եղբայրք իմ, յիշեցէք լի սրտիւ զՍարգիս դպիրս առանց ծուլանալոյ ողորմի ասացէք և մեղացս թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ և Տէրն մեր Քրիստոս ձերն թողցէ ամէն։ Հայր մեր։

147ա.-148բ սկիզբն գլխոց աւետարանին Ղուկասու.

-Վասն աշխարհագրին, վասն բացութեայ հովւացն, վասն Սիմէովնի...

149. Նախադրութիւնք Ղուկա Աւետարանիս.

-Աւետարանս որ ըստ Ղուկա գրեալ է՝ նոյն ինքն Ղուկաս...

151ա խորանազարդ տիտղոսաթերթ Ղուկասու աւետարանին.

-Քանզի բազումք յաւժարեցին վերստին կարգել...

225բ Ղուկասու աւետարանին վերջաւորութեան յիշատակարան գրչի.

-Ով սրբազան հայրք և եղբայրք իմ յիշեցեք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմահտեսի Ղաբլան գրիչս և զհայրն իմ զՍարգիս գրագիրն որ և սկիզբն արարեալ Սուրբ Աւետարանիս և ոչ կարաց աւարտել հանգեաւ առ Քրիստոս թվին ՌՃԻէ-ին, թողութիւն շնորհեցէք յանցանաց մերոց և Տէրն մեր Յիսուս Քրիստոս թողցէ զ[4]ացանըս ձեր ամէն։ Հայր մեր որ երկ...։

226ա-227ա. Գլուխ ըստ Յովհաննու աւետարանի.

-Վասն զի անսկիզբն է Բանն Աստուած, վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ, վասն գալոյն առ նա Գառինն Աստուծոյ...։

227. նախադրութիւն Յովհաննու աւետարանին.

-Յովհաննու աւետարանն գրեալ է Յովհաննու, որ եղբայր է Յակոբայ Զեբեթեա...։

227բ. Մանր բոլորգիր, յիշատակարան գրչի.

-Ասացէք Աստուած ողորմի այսմաւուրց տպող Գրիգորին հոգոյն որ գրեաց զմանրագիրսն ցանկերաց և համայ[5] բաբառիցն միջի և զդարձեալ կազմեաց և դուք վարձատրեսջիք։

229. խորանազարդ տիտղոսաթերթ Յովհաննու աւետարանին.

-Իսկզբաննէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած...։

286բ.-287բ. գլխաւոր յիշատակարան.

-Փառք քեզ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն օրհնութիւն Հօր ծնօղին Ամենակալի և գոհութիւն Որդւոյն Միածնի էիցս հաստչի, բարեբանութիւն Հոգւոյն փառակցի, զարարածս ամենայն զարդարողի և փառաբանութիւն երկրպագութեամբ, Եռանձնեայ Երրորդութեան և միոյ Աստուածութեան այժմ և անզրաւ յաւիտենիս ամէն։ Որ մշտահեղ շնորհիւն իւրով և ամենաբաւական ողորմութեամբն ետ կարողութիւն տկարութեանս իմում ի վերջացեալ դ[6]րուս և վշտապատում ժամանակիս հասուցանել յեզր և աւարտ զվայելչատիպ և զբարեձև Աստուածախօս մատեանս ձեռամբ ոգնամեղ և անիմաստ մահտեսի Ղաբլան գրչիս ատանացւոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին և սուրբ Ստեփանոս եկեղեցեացս։ Արդ գրեցաւ սայ ի դիմահայեացն Պուլղարա որ կոչի Ալշխան ի Հայրապետութեան տանըն Կիլիկիոյ Տեառն Պետրոսի կաթողիկոսի ի թվաբերութեանս մերում ՌՃԾԹ ամին սեպտեմբերի ամսոյն ժգ օրն չորեքշաբթի։ Արդ որք հանդիպիք Աստուածախօս մատենիս այս ընթեռնելով կամ օրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զբազմա աշխատ հայրն

[4] SIC

[5] SIC

[6] SIC

իմ զՍարգիս գրագիրն որ բազում աշխատութեամբ նկարեալ զմագաղաթն և սկիզբն արկեալ սուրբ գրոյս և հասեալ, ի ժգ. տեարն հանգեաւ առ Քրիստոս թուին ՌՃԻԷ-ին որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Բայց և այս ինչ հարկաւոր և պատշաճ իմն թուի ինձ ծանուցանել ձեզ տեարցդ իմոց վասն գրչական արհեստիս, զի ոչ լինելով նօտար յերկրիս մերում այլ ուսալով ըստ Տէրունական հրամանն, որ ասէ՝ որ խնդրէ առնու և որ հայցէ գտանէ և գոհանամ զիւր ամենա առատ ողորմութիւն, որ փոքր ի շատէ ետուր կարողութիւն աւարտել զսուրբ գիրս վասն որոյ երեսն անկեալ աղաչեմ զձեզ ով սիրելի հայրք և եղբայրք իմ յիշեսջիք ի սուրբ աղօթս ձեր զՂաբլան գրիչս, որ բազում աշխատանօք գրեցի և ծաղկեցի ըստ տրչութեան Հոգւոյն Սրբոյ։ Անմեղադիր լերուք սղալանաց գրոյս զի կար մեր այս էր։ Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ ով հայրք և եղբայրք իմ, միով Հայր մեղայիւ յիշեցէք զՂաբլան գրիչս և զհայրն իմ Սարգիս գրագիրն և զմայրն իմ զՊըղտատն և եղբայրն իմ զՄինասն և զկողակիցն իմ և զհօրեղբայրն իմ Թորոսն որ մականուամ կոչի Սևուկ, զՏէր Սարգիսն և զուսուցիչն ոսկերիչ Յակոբն և ամենայն ազգակցաց իմոց թողութիւն խնդրեցէք ամէնազօր Թագաւորէն և Տէրն մեր Յիսուս Քրիստոս թողցէ զ[7]անցանս ձէր։ Ի միւսանգամ գալստեանն երանաւէտ ձայնին և յաջակողմեան դասուն արժանիս արասցէ ամէն։ Հայր.

292ա.բ. յիշատակարան Շղթայակիր Պատրիարքի.

-Շնորհիւ Տեառն Աստուծոյ Ամենազօրին և ամենակարողի։ Ես վերջինս ի ծընունդս եկեղեցւոյ Գրիգոր մեղապարտ վարդապետս՝ սպասաւոր Սուրբ Գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ և իւրոյ մկրտչին եւ Սրբոց Յակոբեանց բարձր Աթոռոյն և Սրբոյ Գլխադրին։ Յոյժ տենչիւ և մեծաւ փափագմամբ ըստացայ զսուրբ և զկենսունակ փոքրատուփ Աւետարանս և ետու գեղեցկապէս երփներփն գունով ծաղկել կազ/մ/ել և արծաթապատ յօրինել ներքոյ և արտաքոյ, ի փրկութիւն հոգւոյս մեղսանարկի. եւ ի յիշատակ իմոյս վարժապետի տեառն Վարդանայ քաջ հռետորի Բաղիշեցւոյ։ Եւ երկուց իմա[8]ց հարազատից հոգէծնունդ զաւակացս ի Քրիստոս՝ Յովհաննն բազմահանճար և աստուածաբան վարդապետի՝ պատրիարգ[9]ի կոստանդնուպօլսոյ և հաւատարիմ ծառայի Սրբոյ Աթոռոյս Քրիստոսի և Տեառնեղբօր Յակոբայ՝ Աբրահամու խոհեմազարդ վարդապետի և արքեպիսկոպոսի Մամիկոնեան գահի՝ մշոյ Սուրբ Կարապետի շնորհաբաշխ շիրմի սպասաւորի և հոգևոր և մարմնաւոր ծնօղացն մերոց և զարմից և աշակերտեալ մանկանց Բան Տեառն պաշտօնէից և այլոցն համայնից, զոր Տէրն բոլորից իմաստութեամբ և հանճարով զամե[նե]սին լցուսցէ և հոգւով և մարմնով զարդարեսցէ։

Արդ՝ ստացա զսա՝ ի վայելումն տեառն Յովհաննու մեծի ռաբունապետի և պատրիարքի վերոգրեցելոյ որ է տեղաւ բաղիշեցի՝ զի վայելեսցէ յերկար կենօք և խընդումիտ բերկրանօք։ Եւ է յիշատակ ի Քրիստոսանիստ Յաթոռն Սրբոյ Յակոբայ ի սուրբ քաղաքս Յերուսաղէմ։

Յընթերցօղացդ լալոտ աչոք ժտեմ զաստուած ողորմի ասել մեզ և նախնեացն մերոց և ձեզ տէրն ամենայնի ողորմեսցի։

Ստացայ աւետարանս ետու ծաղկել կազմել և արծաթել զաստուածախօս սուրբ Աւետարանս, ի թուին ՌՃՀԱ ամին, համսեանն մարտի. Ի սուրբ քաղաքս Յերուսաղէմ ի դուռն սրբոյն Յակոբայ Աթոռոյն ամենայն հայոց։ Ի Փառս Աստուծոյ օրհնելոյն յամենայն էիցս անզրաւ յաւիտենիւ ամէն։ Զծաղկող սրբոյ աւե-

[7] SIC

[8] SIC

[9] SIC

տարանիս զստեփանոս յոգնիմաստ վարդապետն կաֆայեցի՝ որ ջերմ սիրով և բազում երկամբք գունակ գունակ դեղօք և ոսկեաւ զարդարեաց յիշեցէք ի Քրիստոս յոյսն բնաւից ամէն։

Մանրանկարներուն ներդիրին վրայ մանր նոտրգրով գրուած յիշատակարան.

Գրիգորին հոգւոյն, որ գրեաց զմանրագիրսն ցանկերաց և խորանաց և կազմեց (գրութիւնը վուշէ թուղթի վրայ երկու տողով, սակայն տեսանելի է գիրերու գիծեր, որոնցմէ կարելի է հետեւցնել, որ յիշատակարանը նախաբան մը ունեցած է).

Նկարագրութիւն կազմի

Կազմը՝ տախտակ, աստառը՝ արծաթաթել հիւսուածք, կրկնակազմը կը բաղկանայ չորս փեղկերէ՝ Ա. Բ. երես եւ մէջքի ու առջեւի դռնակը։

Ա. երեսը զարդարուած է Հիւսկէն (ֆիլիգրի) արուեստով կատարուած նրբաճաշակ բուսական յօրինուածքներով, որը մանրանկարչական խորանի տեսք ունի՝ կամարի կենդրոնը ունենալով Խաչեալ Տիրոջ բարձրաքանդակը։ Բուսական յօրինուածքներու վերին անկիւնները, Տիրոջ ոտքերու աջ եւ ձախ կողմերը ինչպէս նաեւ վարը հորիզոնական կերպով զարդարուած էմալէ (մինայէ) գոյնզգոյն բուսական զարդերով։ Բ. երեսը ամբողջութեամբ գրեթէ նոյնն է, միայն կենդրոնը Տիրամօր բարձրաքանդակն է։ Ա. երեսի ձախ կողմը մեծապէս վնասուած, վերին էմալը գրեթէ ամբողջութեամբ թափուած, ոսկերչական աշխատանքը տեղ-տեղ կոտրուած են եւ որոշ մասեր կը պակսին։ Ձեռագիրը բացելու ատեն հիւսկէն աշխատանքը կառանձնանայ բուն կազմէն, ոսկերչական արուեստի գործէն պզտիկ կտոր մը կը պակսի նաեւ Բ. երեսի աջ կողմէն, մէջքը եւ դռնակը եւս զարդարուած են նոյն ոճով՝ հիւսկէն եւ էմալէ զարդերով։ Ձեռագիր մատեանը կը փակուի երկու ցանցկէն ոսկէ շղթաներով՝ որնցմէ վարինը վնասուած է։ Ա. եւ Բ. երեսներու հիւսկէն յօրինուածքի ետեւը ներկուած է մութ կանաչ իսկ մէջքի եւ դռնակի ետեւը մութ կարմիր գոյներով։

ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱՅ ՂԱԶԱՐԵԱՆ

Կրկնակազմ Թ.2467/92 ձեռագրի

Ընծայումն ի Տաճարի, Մկրտութիւն, Թ.2467/92, թղ. 5բ., 6ա.

Մարկոս Աւետարանիչ, Տիտղոսաթերթ Մարկոսի Աւետարանի, Թ.2467/92, թղ. 100բ., 101ա.

Տր. Գրիգոր (Շղթայակիր) Պատրիարք Սբյ. Երուսաղիմայ Թ.2467/92, թղ. 289բ.

Տր. Յովհաննէս (Կոլոտ) Պատրիարք Բիւզանդիոյ Թ.2467/92, թղ. 290ա.